

Լավրենտի Շ. Հովհաննիսյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ*

Seda K. Gasparyan–The Armenian Genocide: A Linguocognitive Perspective, Yerevan, YSU Press, 2014, 208 p.

Բանալի բառեր – Հայոց ցեղասպանություն, Եղեռն, ճանաչում և դատապարտում, նոր խոսք, լեզվաճանաչողական մոտեցում, լեզուն որպես անհերքելի միջոց, պայքար հակահայկական քարոզչության դեմ:

Պրոֆեսոր Սեդա Գասպարյանի գիրքը նվիրված է մի հարցի քննության, որը հարյուր տարվա հեռավորությունից այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: Չի կորցրել ոչ միայն այն պատճառով, որ մեզ համար շարունակում են օրակարգային մնալ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, մեր պատմական հիշողությունը վառ պահելու, ավելին՝ մեր պահանջատիրությունն առաջ մղելու խնդիրները, այլև այն պատճառով, որ ներկա գլոբալացող աշխարհի քաղաքացին լինելով, մենք պարտավոր ենք նաև արթուն պահել համայն մարդկության հիշողությունը ու, թերևս, դրանով կասեցնել մեր մոլորակի վրա, ցավոք, այսօր էլ տեղ գտնող՝ ժողովուրդների իրավունքների կոպիտ ոտնահարումները:

Ս. Գասպարյանի գիրքը միազամայն համահունչ է ժամանակի պահանջներին: Այն եզակի է իր տեսակի մեջ, ըստ էության՝ նորություն ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ գրքերի շարքում: Ճիշտ չի լինի կարծել, թե Ս. Գասպարյանի աշխատանքը միայն լեզվաբանական ուսումնասիրություն է՝ նոր մեթոդների ու հմտությունների կիրառմամբ: Ս. Գասպարյանն այստեղ և՛ համեմատաբան է, և՛ ազգագրագետ, և՛ հոգեվեզվաբան, և՛ աղբյուրագետ: Այս աշխատանքը միանգամայն նոր խոսք է ցեղասպանագիտական ուսումնասիրությունների ու առավել լայն առումով՝ հակահայկական քարոզչության մտացածին և չիմաստավորված մեխանիզմները բացահայտելու ոլորտում: Նրա ուսումնասիրության հուսալիության կարևորագույն նախադրյալն այն է, որ հետազոտության ելակետը լեզուն է՝ այն հզոր ու անհերքելի միջոցը, որը մի կողմից իր մեջ խտացնում է իրականության պատկերը, մյուս կողմից՝ խթանում մարդկային հասարակության գործունեությունը բոլոր ոլորտներում: Լեզվի հուսալիության դրույթը ոչ միայն առանցքային է ամբողջ ուսումնասիրության համար, այլև ակնհայտորեն իր

է (ԺԳ) քաարի, թիվ 1 (49) հունվար-մարտ, 2015
ՎԷՆ համահայկական համադես

*Ընդունվել է տպագրության 14.02.2015:

ուրոյն դրսևորումն է գտնում գրքի յոթ գլուխներից յուրաքանչյուրում: Ամենապարզ ձևակերպմամբ կարելի է ասել, որ Ս.Գասպարյանի քննությունն ուղղված է Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում տարաբնույթ պատմաքաղաքական փաստերի տարբեր մեկնաբանությունների ու արժևորումների լեզվական արտահայտության վերհանմանը: Այլ կերպ՝ հեղինակը փորձում է ինչպես Հայոց ցեղասպանության փաստն ընդունող ու դատապարտող, այնպես էլ չընդունող ու ժխտող մեկնաբանություններում տեղ գտած լեզվական փաստերի քննությամբ բացահայտել ցեղասպանական իրողությունների տարաբնույթ արժևորումները, պատմական փաստերի միտումնավոր աղավաղումները՝ դրանով իսկ աշխատանքին տալով նոր որակ, միաժամանակ հաստատելով լեզվաբանության նոր ուղղություններից մեկի՝ ճանաչողական լեզվաբանության կենսունակությունն ու սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը:

Առանձնապես կարևոր է այն փաստը, որ հեղինակը չի սահմանափակվում զուտ լեզվական իրողությունների ուսումնասիրությամբ: Նա դրանք քննում է Օսմանյան կայսրության պատմաքաղաքական անցուղարձերի և Հայոց ցեղասպանության հարցում օսմանյան կեցվածքի ու վարքագծի դրսևորումների հենքի վրա՝ այդ ամբողջ տեղեկատվությունը իրավամբ դիտարկելով որպես տարբեր գրքերից, պաշտոնական փաստաթղթերից ու փաստաթղթային արժեք ունեցող նամակագրությունից քաղված տեքստերի ուղղաձիգ համատեքստ և, ըստ էության, ծառայեցնելով իր քննական նպատակներին:

Իր ուսումնասիրության ողջ ընթացքում մշտապես կիրառելով այս սկզբունքը՝ հեղինակը քննում է այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են ցեղասպանության բուն պատճառների, դրա նախածրագրվածության, ցեղասպանություն / հոլոքոստ երևույթների կապի ու հարաբերակցության հարցերը: Հեղինակն անդրադարձ է անում նաև ցեղասպանության խնդիրների «ուսումնասիրության» համար պատմաբանների խումբ ստեղծելու թուրքածին առաջարկի վտանգավորության ու անարդյունավետության հարցին:

Աշխատությունը սկսվում է դարասկզբին Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուի «The Murder of a Nation» գրքից քաղված հատվածների քննությամբ, որոնք ներկայացնում են այդ սահմուկեցուցիչ իրադարձությունները վկայող և դրանց ընթացքը դադարեցնելու կամ գոնե ինչ-որ չափով մեղմելու նպատակով զգալի ջանքեր գործադրած ակնաստեսի հիշողություններն ու մտորումները: Ս. Գասպարյանը, հենվելով Հ. Մորգենթաուի՝ այդ ցեղասպանական գործողություններին տված որակումների ու արժևորումների վրա և տարբեր մեթոդների կիրառմամբ համակողմանի տեքստաբանական վերլուծության ենթարկելով նրա խոսքի լեզվական ու ոճական յուրահատկությունները, կարողանում է հստակ ու հիմնավոր ձևով բացահայտել Թալեաթի և նրա մերձավոր համախոհների մարդատյաց կերպարը, այդ գործողությունների նախորդված ու ծրագրված լինելու փաստը և բազմաթիվ այլ պատմական իրողություններ, որոնք առանց լեզվական փաստերի կարևորման հաճախ մնում են ստվերում:

Ինչպես իրավամբ նշում է հեղինակը, ի տարբերություն դեսպերի ու դենքերի՝ Հ. Մորգենթաուի ձշմարտացի ու անաչառ ներկայացմանը, որոշ ուսումնասիրողներ կասկածամտությամբ են վերաբերվում Հայոց ցեղասպանության փաստին և ինչ-ինչ անհիմն պատճառաբանություններով փորձում ժխտել այն կամ առնվազն մեղմել այդ ոճրագործության հանգամանքները: Այդ հետազոտողների թվին է պատկանում Գյունտեր Լյուին, որի «The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide» (2004) ուսումնասիրության քննությանն էլ նվիրված է պրոֆեսոր Գասպարյանի գրքի երկրորդ գլուխը: Այստեղ հղումներ կատարելով պատմագիտական ու քաղաքագիտական տարբեր ուսումնասիրությունների վրա, նաև՝ վկայակոչելով բազմաթիվ համացանցային աղբյուրներ և մշտապես քննական ուշադրության կենտրոնում պահելով Լյուիի խոսքի լեզվական յուրահատկությունները, հեղինակը վեր է հանում նրա խոսքային ռազմավարություններն ու պատմական իրողությունները կեղծելու մեխանիզմները, ի ցույց դնում հարցերի

էութեանը վատատեղյակ ընթերցողի վրա ազդելու և նրա ընկալումն ու արժևորումն ուղղորդելու թրքամետ մտադրությունը:

Մենագրության հաջորդ՝ “Ronald Suny’s Strategy of Misleading the Reader” վերտառությամբ գլուխը նվիրված է հայկական ծագում ունեցող, սակայն, ցավոք, հակահայկական քարոզչամեթոդային հյուսած սարդոստայնում հայտնված Ռոնալդ Սյունիի խոսքաստեղծման հմտությունների քննությանը, որոնք, կամա թե ականա, ապակողմնորոշում են ընթերցողին՝ քողարկելով Հայոց ցեղասպանության իրական պատճառները, դրա նախածրագրված բնույթը, ըստ էության, նպատակ ունենալով թուրքական իշխանությունների ուսերից հանել հայերի բնաջնջման քաղաքականություն իրականացնելու պատասխանատվության բեռը:

Ս.Գասպարյանի ուսումնասիրության մեջ առաջ է քաշվում նաև Իսրայելի պետական-պաշտոնական ժխտողականության բարդ ու կարևոր խնդիրը (գլուխ IV): Ելնելով Իսրայելում տարբեր պաշտոնական դիրքեր զբաղեցնող ղեկավարների ելույթներում ամկա լեզվական փաստերի իր քննության արդյունքներից, նաև՝ պետական դիրքորոշմանը հակադրվող գիտական շրջանակներում շրջանառվող ողջամիտ մեկնաբանություններից, հեղինակն իսրայելական ժխտողականությունը բնութագրում է որպես երկկողմ իրողություն՝ մի կողմից՝ հրեական իշխանությունների այսպես կոչված Realpolitic-ի հետևանք, մյուս կողմից՝ հոգեբանական գործոնի ազդեցություն, որը նա որակում է որպես «բացառիկության սինդրոմ»:

Ս. Գասպարյանը անդրադարձ է կատարում նաև թուրք պատմաբան-հանրաբան Թաներ Աքչամի “A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility” գրքին, որի հեղինակը թուրքերի ժամանակակից սերնդին առաջարկում է առերեսվել իր անցյալի անոթալի փաստերի հետ և բարոյական պատասխանատվություն զգալ նախնիների իրականացրած հայատոյաց քաղաքականության համար: Թեև Թ. Աքչամի ոչ բոլոր գաղափարներն են ընդունելի, սակայն, ըստ Ս. Գասպարյանի, կատարված իրադարձությունները որպես ցեղասպանություն (genocide) որակելու նրա խիզախումը արժանի է դրական գնահատականի:

Հարկ է նշել, որ լեզվաձանաչողական ընդգրկումն մոտեցման շրջանակներում կարևորվում է մարդակենտրոն ուսումնասիրությունների դերը երևույթների ընկալման ու արժևորման գործում, քանի որ հենց դրանք են օգնում բացահայտելու լեզվական երևույթների և սեփական կենսափորձով մարդկության կուտակած գիտելիքների հարաբերակցությունը: Դրանք հնարավորություն են տալիս առաջնորդվելու մարդկային գիտակցության մեջ ձևավորված ձանաչողական կաղապարներով և բացահայտելու մեզ շրջապատող աշխարհի այս կամ այն երևույթի իրական էությունը:

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ցեղասպանական գործընթացների իրական ու ճշմարիտ արժևորման համար անհրաժեշտ է նախ և առաջ հաշվի առնել «հայ» և «թուրք» հասկացությունների իմաստային, առնչական-կային և, վերջապես, մտազուգորդային դաշտի հագեցվածության յուրահատկությունները (գլուխ VI), որոնք, ինչպես ցույց է տալիս քննարկված ու ներկայացված լեզվական նյութը, ամենևին էլ թուրքի օգտին չեն խոսում: Համոզիչ է նաև տարբեր մեկնաբանություններից քաղված՝ երկու ազգերին տրվող որակումների վերլուծության հիման վրա ձանաչողական կաղապարների վերհանման սկզբունքի կիրառությունը: Հեղինակի կողմից արտածված ձանաչողական կաղապարների (թուրք -թշնամի, թուրք - բարբարոս, թուրք - ազգասպան՝ մի կողմից և հայ - արարող, հայ - քրիստոնյա/քրիստոնեություն, հայ - գոհ, հայ - վիշտ, հայ - քաջություն, հայ - գոյատևում՝ մյուս կողմից) հաշվառումը թույլ է տալիս Հայոց ցեղասպանության փաստին թերահավատությամբ վերաբերվող, այն հերքող կամ նույնիսկ այս կամ այն կերպ արդարացնող հրապարակումներում բացահայտել մեր պատմությունը խեղաթյուրող հեղինակների ժխտողական դիրքորոշման արհեստածին բնույթը:

Գրքի վերջին գլուխը նվիրված է **եղեռն** և **genocide** բառերի իմաստային

համարժեքության խնդրի քննությանը, որը հեղինակն իրականացնում է լեզվի և խոսքի մակարդակներում: Ուսումնասիրելով այդ միավորների իմաստային դաշտերը՝ պրոֆեսոր Գասպարյանը եզրակացնում է, որ տվյալ դեպքում գործ ունենք հոմանշային համարժեքության հետ, սակայն ակնհայտ է, որ միջազգային իրավունքի դաշտում ամրագրված ու գործածելի միավորը, անշուշտ, 1948 թվականից ի վեր ՄԱԿ-ի կողմից հաստատված **genocide** բառն է: Ուսումնասիրությունը ամփոփվում է **genocide** բառամիավորի իմաստային դաշտը ներկայացնող գծապատկերով:

Կուզենայի հատուկ կանգ առնել **եղեռն** բառի վրա: Այս բառը, ինչպես իրավամբ նշում է գրքի հեղինակը՝ հենվելով Հր. Աճառյանի **Հայերեն արմատական բառարանի** տվյալների վրա, հնդեվրոպական ծագում ունի (ըստ ակադ. Գ. Ջահուկյանի՝ *el – «ոչնչացնել» արմատից) և նշանակում է «չարագործություն»: Այս բառի գոյությունը հայերենում վկայված է 5-րդ դարի **Աստվածաշնչում**, գործածվել է նաև 5-րդ դարի մեր շատ մատենագիրների կողմից, և Հայկազյան բառարանը բացատրում է այն որպես «չարագործություն, ոճիր»: Հայկազյան բառարանագիրներից, անշուշտ, չենք կարող պահանջել, որ նրանք հիշատակեին **ցեղասպանություն** բառը, քանի որ, ինչպես գիտենք, **genocide (ցեղասպանություն)** բառը շրջանառության մեջ է մտել 1948-ից հետո: Սակայն, ցավոք, երբ զննում ենք հայերենի շատ ավելի ուշ կազմված բառարաններ (1965 թ., 1969 թ., 1976 թ.), տեսնում ենք, որ **գենոցիդ** կամ **ազգասպանություն, ցեղասպանություն** բառերը նրանցում ընդգրկված չեն: Նույն պատկերը գտնում ենք նաև հայտուներեն բառարաններում (**եղեռն**–1.злодеяние, тяжёлое преступление, 2.резня, բայց ոչ՝ геноцид): Սա, անշուշտ, մեր թերացումն է: Սակայն հայտնի է նաև, որ Հովհաննես Շիրազը դեռևս 1960-ականներին գրած իր բանաստեղծության մեջ **եղեռն** արմատով նույնիսկ **եղեռնվել** նոր բառ է ստեղծել և հենց «ցեղասպանվել» իմաստն է ամփոփել այդ բառում (Ես ծնվեցի, երբ իմ ցեղն էր սպանվում, / Եղեռնվում էր երբ ամենից վսեմն իմ):

Ավելորդ չենք համարում նշել նաև, որ ճանաչողական լեզվաբանությունը ենթադրում է տեքստի խորքային ընթերցում, որի համար անհրաժեշտ է բազմակողմանի ու խորքային գիտելիք: Դա ակնհայտորեն տեսանելի է պրոֆեսոր Ս. Գասպարյանի գրքի յուրաքանչյուր էջում, ու նաև սրանով է պայմանավորված այս աշխատանքի հաջողությունը:

Անկասկած, շատ ենք կարևորում նաև այն հանգամանքը, որ աշխատությունը գրված է անգլերեն, քանզի հենց այսպիսի ուսումնասիրություններով է, որ հնարավոր է հակազդել Հայոց ցեղասպանության անհերքելի իրողությունը ժխտող և ընդհանրապես մեր պատմությունն աղավաղող հետազոտողների կեղծ մեկնաբանություններին և միջազգային հանրությանը հասանելի դարձնել հակահայկական քարոզչության դեմ մեր պայքարի արդարացիությունն ու հիմնավորվածությունը: Այդ են վկայում արտերկրից ստացված արձագանքները Սեդա Ք. Գասպարյանի “The Armenian Genocide: A Linguocognitive Perspective” գրքի առնչությամբ:

Լավրենտի Շ. Հովհաննիսյան – Գիտական հետաքրքրությունները. հայոց լեզվի պատմություն, պատմական բարբառագիտություն, ստուգաբանություն, 5-րդ դարի մատենագրության լեզվական քննություն: Հեղինակ է 10 մենագրության, 1 բառարանի՝ Գրաբարի բառարան (Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր) և 80 գիտական հոդվածների:

A VALUABLE AND IMPORTANT WORK

Seda K. Gasparyan–The Armenian Genocide: A Linguocognitive Perspective, Yerevan, YSU Press, 2014, 208 p.

L. Sh. Hovhannisyan

Key words – The Armenian Genocide, Yeghern, recognize and condemn, to give a new account of, linguocognitive approach, language as an irrefutable means, struggle against anti-Armenian propaganda.

ЦЕННЫЙ И АКТУАЛЬНЫЙ ТРУД

Seda K. Gasparyan–The Armenian Genocide: A Linguocognitive Perspective, Yerevan, YSU Press, 2014, 208 p.

Л. Ш. Оганисян

Ключевые слова – Геноцид армян, Егерн, признавать и осуждать, по-новому осмыслить, лингвокогнитивный подход, язык как неопровержимое средство, борьба против антиармянской пропаганды.

ԳՐԱԴԱՐԱՆԱԳՅՈՒՆՆԵՐ

Է (ՃԳ) րարհ, րրի 1 (49) հիւլիս-իւրի, 2015

ՎԷՎ հասկանալի և հարուստ